

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԻՐԷ, Ապրիլի 4-րդ

ՄՈՒԿԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS

Le Caire, rue Abdine

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ

Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար

մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԳՏՈՒՄ

Տարեկան ՂՂ. ողջ 400

Վեցամսեայ » 55

Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան Ֆր. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒՄԸ

ՈՒՆԻ ԴՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԿԵՐՈՒ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն—Խմբագիր Յ. ԱՆՓԻՍԻ

ՄԵՐ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պատկառելի ծերունիք մը, խիստ յարգուած անձնաւորութեան մը, Սա-
պէթ փաշայի յուղարկաւորութիւնը
որ երէկ տեղի ունեցաւ — ինչպէս որ
կը տեսնուի մեր տեղական լուրերու
բաժնին մէջ — ուղարկութեան ար-
ժանի իրողութիւն մը եղաւ որուն
վրայ շատ խօսուեցաւ քաղաքիս մէջ:
Երբեք իսլամի յուղարկաւորու-
թիւն մը — բարձրաստիճանի և հա-
րուստ անձնաւորութեան մը յուղար-
կաւորութիւնը — այդքան պարզ բայց
միևնոյն ատեն այդքան վեհաշուք չէ
եղած որքան երէկինք:

Ոչ ուղտեր կ'երթային առջևէն և
ոչ «ֆըզհի»ներու անհատնում բազ-
մութիւն մը, ոչ խնկամաններ բռնող
պաշտօնեաներու երկայն շարքը կար
և ոչ ալ աղօթքներ պուսաղող աշաք-
ներու երամբ:

Եւ ինչ որ նշանակելի է, թափօր-
ներու ետեւէն սովորաբար լացող ու
ճշող կիներ չէին տեսնուեր. յուղար-
կաւորութիւնը կ'ընթանար անշուշտ
և անձայն:

Տասնի չափ կրօնականներ ծանր
ծանր կը քալէին դադաղին առջևէն
առանց ձայն հանելու:

Իսլամական աշխարհին մէջ նորու-
թիւն մըն է այս որուն յղացումը
պատիւ կը բերէ հանգուցելոյն զա-
ւակացը, որոնց ճաշակը և հասկացո-
ղութեան եղանակը շատ գնահատ-
ուեցաւ ներառեալ շրջանակներու մէջ:

Դարերէ ի վեր ընդունուած սովո-
րութիւնները և օրէնքները տեղի կու-
տան ստէպ պատշաճութեան և գե-
ղեցկագիտութեան պահանջներուն
առջև:

Դիտաւորութիւններ երէկի յուղար-
կաւորութեան նկարագրութիւնը ընել
չէ այս սինակներու մէջ, ուր տե-
ղը չէ:

Երէկի թափօրը յիշեցնել տուաւ
սակայն մեզի մեր յուղարկաւորու-
թիւնները որոնք «մասխարկութիւն»
ներ» են պիտի ըսէինք պարզապէս
եթէ եկեղեցական և կրօնական հան-
գամանքը կասեցնել չի տար զմեզ
մեր ազատախօսութեան մէջ:

Որքան որ շրջահայեաց ըլլալ ու-

ղենք մենք, անոնք չեն դադրել սա-
կայն ծաղրելի ըլլալէ օտարներու առ-
ջև որոնք անշուշտ չեն կրնար բա-
ցատրել թէ ինչպէս կ'ըլլայ որ քսա-
ներորդ դարուս մէջ գեռ կը շարու-
նակենք այդ կէս—վայրենի բարբերը
ոչնեմալ, չենք ուզեր ուրիշներու օ-
րինակին հետեւի և չենք բարեկար-
գեր սովորութիւններ որոնք երբեմն
կրնային աչքի չի զարնել բայց այ-
սօր անհիթեթութիւններ են սոսկ:
Եւ իրաւ ալ, անբնական, անճաշ
և ծաղրելի կը գտնենք մեր յուղար-
կաւորութիւններու եղանակը:

Ինչ են այդ կարմիր, կապոյտ,
ոսկեգօծ շուրջաւորով քահանանե-
րը, ոսկեծամուկ շապիկներով տիրա-
ցուններ որոնք սե զագագի մը առ-
ջեւէն կ'ընթանան. ինչ ներդաշնա-
կութիւն կայ այդ տիւրու արարողու-
թեան և տիրացուններու աւանջ պա-
տըստող կանչուողութիւն միջև:

Ճաշակի և պատշաճութեան դէմ
հայհոյանքներ են այդ ամենը և ժա-
մանակը եկած կը կարծենք թիւ մը
աւելի ուղարկութիւն ընելու համար
որ վայրենիներու տեղ չի դնեն զմեզ:
Երբ իսլամները կը հասկնան այս
պարագան և կը բարեկարգուին, պատ-
ճառ մը չկայ որ միևնոյն չընենք
նաև մենք, մանաւանդ երկրի մը մէջ,
ուր ամեն դիւրութիւններ կան, մա-
նաւանդ բրիտանական հասարակու-
թեանց համար:

Կաթալիկ և բողոքական եկեղեցի-
ները շատոնց հասկցած են աղօթք-
ները փողոցներու մէջ պտտեցնելու
անպատեհութիւնը, հետեւաբար շատ
լուրջ և վեհաշուք կերպարանք
մը կուտան իրենց յուղարկաւորու-
թիւններու անձայն, անշուշտ կերպով
առաջնորդելով զանոնք մինչև վերջին
կայանը:

Եւ ինչ որ մարդուս ջիղերը ոտը
կը հանէ այն ալ սա պարագան է
որ մեր մէջ, որքան մեռնողը մեծ
մարդ կամ շատ հարուստ ըլլայ այն-
քան աւելի խայտառակօրէն կը թող-
ուի, որովհետեւ տիրացունները քսան
զրուշի համար կոկորդին պատուելու
աստիճան կը պուտան այդ սե արա-
րողութեան միջոցին և քահանաները
աւելի աններդաշնակ ձայներ կը հա-
նեն իրենց մօրուքին տակէն:

Ժամանակը եկած չէ արդեօք այս
ամենուն վրայ թիւ մը աւելի լրջօրէն
մտածելու և տալու մեր յուղարկա-
ւորութիւններու այն խորհրդաւոր վե-
հութիւնը որ անհրաժեշտ է:

Մեր քաղաքական ժողովները ու
կրօնական դասը իրենց խորհրդակ-
ցութեան նիւթ պէտք է ընեն մեր
այս դիտողութիւնը և պէտք է տան
անոր այն կարեւորութիւնը որ ան-
շուշտ իրենց ուղարկութեան չի կը-
նար վերադառնալ:

Աղօթքներ, երգեր և եթէ կուզէք,
պուստք, կանչուողութիւն մեր տան,
մեր եկեղեցիներ մէջ, բայց փողոցին
մէջ տաններ մեր մեռելները ինչպէս
կը տանին ուրիշները, առանց աղ-
մուկի և առանց ատանկ անճաշակ
զգեստաւորութիւններու:

Յաւալի պարագաներու մէջ «մանի»
չեն կանչեր և մեռելներու առջև կար-
միր չեն հագնիր:

Արարները մենէ առաջ գիտնալու
էին ատիկայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՅՐԱՏԱՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՅԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌՁԵԻ

Երեսփոխանական ժողովը, արտաքին գոր-
ծոց նախարարութեան պիտակին վիճաբա-
նութեան սկսուած միջոցին, որի զանա-
կան հարցադրմանց հետ Պ. Ռուսնէի
կողմանէ առաջարկուած հարցադրումով
մը զբաղեցաւ որով այս վերջինը կառավա-
րութեան կը հարցնէր թէ ինչ միջոցներ
ձեռք առնուած կամ առնուլ մտադիր էր
Հայաստանի մէջ շարքերու վերադարձը ար-
գելու և Պերլինի դաշնագրութեան յօ-
ւածները յարգել տալու համար:

Պ. Ռուսնէ խօսք առնելով համառօտիւ
կը յիշէ այն միջոցները որոնց հետեա-
նօք ֆրանսական նաւատորմը Միտլիի
զրկուեցաւ և այն յայտարարութիւնները զոր
Պ. Տիգրան ըրաւ անցեալ նոյեմբեր 4-ին
Երեսփոխանական ժողովին բեմէն: Ար-
տաքին գործոց նախարարը միտք ունի,
յիշեալ յայտարարութիւններուն հետեւ-
ութեան մը տալ կամ պիտի ձգէ որ հինգ
տարիէ ի վեր հայաստանի մէջ քաղաքա-
կրթութեան զէմ գործուած բոլոր ոճիւրհ-
րու պատասխանատուն Ապտիլ Համիտ
հանդարտօրէն շարքերը շարունակէ: Հա-
յաստանի դէպքերը կը վերանորոգուին: 1894
և 1896-ի շարքերուն վերսկիւրը կը տես-
նանք: Կարելի է չորդոքել:

Պ. Շարլ Պերնար.— Շարլի շարքերուն
զէմ չորդոքեցիք:

Պ. Ռուսնէ.— Այդ ընդմիջումին կանգ
չպիտի առնուի:

Շատ մը վաւերական թուղթեր, պաշ-
տօնական տեղեկութիւններ և նախախնդ-
հետեցնելով կ'ըսեն թէ հայկառակ մեր նա-
խարարին լուսանկարը, հայաստանի մէջ
գործուած շարքերը մեկուսացեալ սպանու-
թիւններ չեն, այլ առաջուրէն որոշուած
բողոքովին ընդունելու ծրագրի մը
գործադրութիւնը: Կառավարութիւնը բան
մը չպիտի ընէ այդ շարքերուն զէմ դնելու
և Երոպա բան մը չպիտի ընէ իւր ազ-
գու բողոքը լսեցնել տալու համար: Պետք
է որ Երոպայի գործէ իւր գոյութեան գի-
տակցութիւնն ունեցող ժողովուրդի մը ինչ,
պատու որ հոգեվարքի մէջ կը գտնուի և
բողոքովին կորսուելու մօտ է: (հաւանու-
թեան ձայներ): Ֆրանսան հոգ հոգային
շահ մը չունի: Միայն արգարութեան և
մարդասիրական գաճ մը ունի: (ձայնահա-
ւորութիւն):

Կը հարցնենք արտաքին գործոց նախա-
րարին թէ ինչ ըրած է Հայաստանի հա-
մար, որ է ըսել արգարութեան և քաղա-
քակրթութեան համար կամ թէ Ֆրանսայի
համար:

Պ. Տիգրան արտաքին գործոց նախա-
րար.— Կը զարմանամ որ Պ. Ռուսնէ Արեւել-
քի մէջ ֆրանսական ազդեցութեան վերա-
հաստատման գործին մէջ սոսկ նիւթական
շահերու պաշտպանութիւնը տեսած ըլլայ:
Օտարը ատուլ ուրիշ բան տեսաւ (շատ լաւ,
նստարաններէն): Չկարծուի որ կուզեն նե-
րողութիւն խնդրել մեր ազգայինները պաշտ-
պանած ըլլալու համար, սակայն արտա-
քին գործոց նախարարի պաշտօնը այն առ-
տիճանի փափուկ է որ իրեն կը պատահի
ամենուն ալ միտնալայն հաճոյ չերենալ:

Չմիզ յանցաւոր կը նկատեն Արեւելքի
մէջ մեր ներկայութեան օգուտ բաղելով
Հայկական խնդրը մէջտեղ դրած չ'ըլլա-
նու համար: Չ'էինք կրնար այդ խնդրը
կարգադրել առանց ուրիշ տէրութիւններու
աջակցութեան, և եթէ այն ժամանակ իւ-
րենց խորհուրդը հարցուցած ըլլայինք, լուրեւայն
կերպով իրենց իրաւունքը տուած պիտի ըլ-
լայինք միջամտելու մեր վէճին զոր շուտով
փակուած տեսնել մեր շահէն լր: Դուրս
պարտաւորութիւններ ստանձնեց Պերլինի
վեհաժողովին մէջ, սակայն վեհաժողովը
չ'ուզեց որ Հայկական հարցերը ամեն մէկ
տէրութեան կողմանէ առանձին խնդրով նիւթ
ըլլան: Հայկական խնդրը Հայկական
միջազգային խնդիր մըն է: Ֆրանսա չը
կրնար միտնալ լուծել զայն, սակայն Հա-

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵ ԲԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱԶԻՐԷ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻՑԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

յոց տառապանքները թեթևեցնելու մասին ձեռք բերած ըրած ըլլալու գիտակցութիւնն ունի և յաջողած է նոր ջարդերու առաջին աստիճանը:

Այս պահուստ միջազգային միջամտութիւն մը երեսն պիտի հանէր փափուկ և բազմապիսի խնդիրներ: Սակայն այդ միջամտութիւնն ալ բոլորովին անկարելի չ'է: Հիմա խնդիրը Սովետական իրաւանց և անանաշնորհումներուն զպչելու վրայ չ'է: Խնդիրը կը կայանայ Օսմանեան կայսրութեան բոլոր բաղադրացիներուն համար տրուած վարչութիւն մը և բացարձակ հանգստութիւն մը ձեռք բերելու մէջ: Խնդիր է նաև կարեկցութեան արժանի շատ մը ժողով, որոնք ապաստել այն բնութեաններէն որոնց զօժ կը թաղու վրայ են: Ֆրանսա, որ արդէն այնքան ճիշդը ըրած է, պատրաստ է զանոնք վերահսկելու և այդ գործին մասնակցելու: Ֆրանսա պատրաստ է ինքնին թուրքիոյ անկեղծ բարեկամ ցուցնել անոր յիշեցնելով թէ Հայաստանի վիճակը իրեն որչափ փաստաբան կընայ ըլլալ: (Ծափահարութիւնք):

Պ. Ռուսնէ կը պատասխանէ որ Նախարարին պատասխանը բոլորովին փոխական է: Օրակարգ մը կը ներկայացնէ որով կառավարութեան կ'ապաստէ Եւրոպայի ու շարքութիւնը հրաժարել Սովետական յանձնարարութիւններուն անկայանի բռնաբարմանը վրայ:

Պ. Տընի Գոշն գիտել կ'ուսայ թէ Եւրոպա արդէն Պերլինի վեհաժողովին մէջ Հայկական խնդրին լուծումը ձեռք բերած է: Իրմէն կախում ունի այդ լուծումին և տեւէ ըլլալ՝ ստիպելով Սովետներ որ իր խոստացած բարենորոգումները գործադրէ: Զորս Հայեր շատ մը տարիներէ ի վեր բանտարկուած են և ի դուրս խեղճերը կ'ապաստեն որ իրենց դատը տեսնուի: Թեքու Նախարարը պիտի հասկնայ որ իր միջամտութիւնը աւելի ազդեցիկ կ'ընայ ըլլալ:

Պ. Պ. Մալաբարիս և Իզմար օրակարգ մը ներկայացուցին հետեւի մտքով:

«Եւրասիականաց ժողովը կառավարութեան յայտարարութիւններուն հաւանութիւն տալով կ'անցնի օրակարգին»:

Վերջինիս օրակարգը 238 ի դէմ 28 ձայնով կ'ընդունուի:

Պէտք է ընթերցողը ուշադրութեան առնուն որ կառավարութեան ստացած մեծամասնութիւնը շատ կարեւոր չ'է: Արդէն բարախներու խնդրին և Պ. Գոնսթանի թուրքիայէն մեկնելուն առթիւ Հայկական խնդրոյ վրայ տեղի ունեցած վիճարարութենէ

վերջը բիշ Գոշն սը Նախարարութիւնը տապալէր, եթէ Պ. Վալաբարիս Թուսո չը յաջողէր մեծ ճիշդութիւն անշտան մեծամասնութիւն մը խել ժողովին:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գ. Ի. Ն. Առաջնորդին վիճակը երթալով բարեկարգու վրայ է:

Ուշախ ենք ծանոցանելու թէ զինքը վարմանով բիշիկները յայտարարած են որ այլևս հիւանդութիւնը որուն է վտանգ չի սպառնար:

— Աղեքսանդրիոյ ընտրողական ժողովը, նախագահութեամբ Յ. Յարութիւն քահանայի, իր անդամներէ նիստը ըրած է անցեալ շաբաթ և արդէն պատրաստած է ընտրելեաց և ապաւորիկ ցանկը:

Այսօր կէսօրին Կ. Պոլսէն ստացուած հեռագրէ մը ցաւ ի սիրտ կ'իմանանք թէ ԱՄՆԵ. ՕՐԱՄԱՆԵՍԵ ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ ՄԱՅՐԸ Երեկ վախճաններ է կարճ հիւանդութենէ մը ետքը:

Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, մայրն է նաև բազմաբնակ բաղամանով լուսանկարիչ Տ. Գ. Լէքէճեանի տիկնոջ, որուն կը ներկայացնենք մեր խորին ցաւակցութեան արտայայտութիւնը:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ի նպատակ Որոսիոյց և Բարեգործական ընկերութեանց խառն յանձնաժողովի անուրիկ տրուելը թատերական երեկոյ: Թին պատրաստութիւնները ամենայն փութութեամբ առ ձեռք կը տարուին:

Երեկոյը, ինչպէս ծանուցելուք, տեղի պիտի ունենայ յառաջիկայ փետրուար 9ին, կիրակի զիշեր, Օրկայի թատրոնին մէջ որ պիտի ներկայացուի Պիտանի գեղեցիկ թատերականութիւն «Ժաշու»-ը: Պ. Նոպլէ, մին Բարիկը համապատասխան վերադասութիւն, խաղին գլխաւոր դերը պիտի ստանան, ինչ որ կ'ապահովէ երեկոյին արուեստագիտական մասը: Գալով նիւթականին, հիմակուց կրնանք ըսել թէ երեկոյը եղանակի բարեգործական հանդէսներու լաւագոյններէն մին պիտի ըլլայ բանի որ հիմակուց գրեթէ տոմարը ամբողջովին սպառած են շնորհիւ մասնախումբին գովելի ջանքերուն:

յուրիւրը, նոյն անգամ խօսքերը գործածելով՝ նոյն գործովի ժպիտին ներքէ. միեւնոյն փայլալոյզ ձայնի ելեկները՝ հիւրերուն ներկայութեանը՝ անոր երեսին ըսելու համար այն խօսքերն որոնք երկուտն են կը շուարեցնեն և զօտնու համար զանոնք անհարակ ընկելու աստիճան կը շրջեցնեն:

— Խաղիկ կ'ընեն որեւէ կը հագուեն ցընեն ձեզի, օրիորդ... բացարձակապէս վրանուզ կը թափվին կոր հագուստներով... և կամ թէ «օրիորդ, գոնէ մաշեր, նիւթ շնորհքով շտկեցէք. հաստապէք որ կարծես թէ կեղծամ գրեք էք...»

Ու զիստայպի մանր մունր բաներ, իր կօշիկներուն ձեւին կամ լանջապաննէ, բուն յարգարմանը վրայ կեղծաւոր զնութեամբ կը պիտի ընդհանրեն իր անհագաւորութիւնը:

ԳՐԱԳԱՆ ԼՈՒՐԵՐ

«Հայ հանդէս», այս պիտի ըլլայ տիրուէր այն նոր գրական ու ազգային ամսագրութիւն որ Արփիար Արփիարեանի խմբագրութեամբ պիտի սկսի մօտերս հրատարակուիլ Բարեկի մէջ:

Արփիարեանի հրատարակագրի ու գրագետի մեծ կարողութիւնը գոյցէ միակ անվիճելի բանն է որ կայ իր մէջ Կոստանդնուպոլսէն անհնարան վեճերէ վերջ՝ լուրջ հանդէսի մը պէտքը մինչև հիմակ զգալի էր արտասահմանի մէջ և կը յուսանք թէ Արփիարեան որ իրեն անյարմար եղաւ ամեն հանգրձանը վրայէն թօթափած, իբրև լոկ գրագետ պիտի սկսի գործել, այդ պակասը պիտի լրացնէ:

* * *

Ստացանք Պ. Աստու Երանանի «Գիւցազնօրէն»-ը: Տար շունչով և հզօր ու պատկերալից ոճով հագնեցողութիւն մը՝ որ երեսուն կողայ ինքնատիւ բանաստեղծին առողջ ու կորովի տաղանդը: Անոնք որ հոս ու հան, թերթերու մէջ, առիթ ունեցած են կարդալու պատանի բանաստեղծին հատուածներ անշուշտ պիտի փափաքին հատորի մը մէջ ամփոփուած ունենալ զանոնք: Այդ գրասէրները, Գահիկի մէջ, կրնան դիմել «Փարոս»-ի խմբագրութեան որ կը գտնուին «Գիւցազնօրէն»-ի մէկ և երկու ֆրանքոյց երկեակ տպագրութիւնները: Իսկ հետագայ տեղերը կրնան դիմել ուղղակի հեղինակին:

A. Yardjianian
42, Boulevard Arago Paris

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Խումբ մը Հայ երիտասարդներ, բնի սիրահար և փափաքող ազգային թատերախմբերու, երեքնիս աղաւոր յիշատակը մեզ մտքինէ չի տալու, խանդավառ ոգեւորութեամբ մը ի մի հաւաքուած են, յառաջիկայ կիրակի զիշեր, 2 վերաբար, ազգային ներկայացում մը տալու համար Եւրոպա Ապուլ-Ազիլի թատրոնին մէջ: Ներկայացուելիք խաղն է

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Հինգ արարուածով ողբերգութիւն մը, որուն պիտի յաջորդէ ծիծաղաշարժ գաւեշտ մը:

Այդ երիտասարդներու ազգասիրական ձեռնարկը արժանի է ամեն քաջալիւրդութեան և անշուշտ թատեր

ներ, որ Ժերմէն սիրտը կը ծակին. անոնց պնդանքը ըլլալու, շատ փափկասիրտ, նոյն իսկ շատ զգայուն կին էր: Անհնար սիրութեան այդ շարունակող խայթածքներէն, խուլ բարկութիւն մը կը զգար, ինքզինքը ծիծաղելի և իր բոլոր ջանքերուն հակառակ օրիշներէն տաքերը զգալու աւանդ:

Ինքն իրեն ըսաւ որ իր աղքատութիւնը չպիտի կրնար կրեք մաքառիլ անոնց հարստութեան դէմ: (Այդ միջոցին պարիկը թուրքերուն թուրքը հաղիլ թէ կը շահէր): Աւելի ազիկ էր վերցնել ծախքի առիթները, հրամարիլ այդ յարաբերութիւններէն, որոնց մեծամասն սովորութիւնը զինքը կը վերադարձնէ ու աւելի ևս ցոյց կուտային այն արի զրկանքները որոնց կ'ենթարկէր զինքը իրեններուն օգնութեան հասնելու համար:

րասէր հասարակութիւնը պիտի խրատուէր զերեւել ներկայ գտնուելով այդ երեկոյթին որուն համար խիստ չափաւոր զինքն որոշուած են:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԾԽԱՐԿԵՆ

ԱՆԳԼԻՍ ԵՒ ԴԵՐՄԱՆԻՍ.— Պիւղի իր ու Չեմպլէնի կողմը, բանի մը օրէն ի վեր, Անգլիոյ և Դերմանիոյ միջև կսկի մը ձեռք առնելու երեկոյը ունի: Երկու երկիրներուն կամ լրագրներուն խրաբանչիւրը իր նախարարին կողմը կը բռնէ: Գերմանիոյ մէջ «Քեօնիշէ Չայթունկ»-ը ու «Նաուսոնալ Չայթունկ»-ն է և Անգլիոյ մէջ «Թայմ»-ը: Պայքարը կը մղուի ծաղրանկարներով, պատմական յիշատակներով և լրագրի արտասպանով: «Թայմ»-ը հրատարակեց երկու ընդարձակ յօդուածներ, որ խնամով բաղուածք մը կ'ընէ Գերմանիոյ մէջ կրկու տարիէ ի վեր եղած նախատական հրատարակութիւններուն, վերաւորիչ ծաղրանկարներուն և թշնամական նամակներուն: «Թայմ»-ը կը հետեցնէր թէ հարաւային Արփիարի պատերազմէն ի վեր և ոչ մէկ երկիր Գերմանիոյ ու անոր լրագրներուն չափ աշխատած է Անգլիան զայրացնելու, զայն նողկալի ընկելու և անարգելու: Միւս կողմէ «Նաուսոնալ Չայթունկ»-ը կը պատասխանէ, մէջ բերելով 1870ին «Բընչ»-ի մէջ հրատարակուած հին նկարները, որ Վիկտոր Ա. ծերունի կայսեր պէտք եղած յարգանքը տրուած չէ: Կը հրատարակէ նաև «Թայմ»-ի ու բոլոր անգլիական լրագրներուն յօդուածները, որոնք Վիկտոր Ա. կայսեր նկատմամբ պաշտօնից օրէնքին մէջ թերացած են: Վերջապէս երկու կողմէ իրարու զիջու կը նետեն երեսուն տարիէ ի վեր հրատարակուած լուրջ ու երգեծական յօդուածները և ծաղրանկարները: Այդ բանալիտին կը յաջորդեն ծանրակշիւ լուրեր: Մինչև իսկ ըսողներ կան թէ Կալէսի իշխանը մօտերս Գերմանիա պիտի չերթայ, ինչպէս ծանուցուած էր, սակայն այդ լուրը Լոնտոնի մէջ բոլորովին հերքուցաւ: Անգլիոյ գահաժառանգորդ իր կայսերական ազգականին այցելութիւն մը պիտի տայ պարզ կերպով: Պաշտօնական ընդունելութիւններ, զօրահանդէսներ ու հացկերոյթներ տեղի պիտի չունենան: Կայսրի իշխանը նոյն իսկ Պերլինի անգլ. դեսպանատունը պիտի չերթայ, թէև

Անգլիոյ կերպով բաշտեցաւ այդ հիւրամիտ տուններէն, մոռցաւ, միօրեայ այդ բարեկամութիւններէն, որոնց մէջ իր սրտէն բան մը չէր թողոր բարեբախտաբար: Սեւտոյ, Սթա Ապուհան և իր աշակերտուհիները բաւական եղած էին իր կեանքը լեցնելու: Պալատը չէր ձանձրանար, դուրս ելլալ ալ չէր փափագէր:

Ուրեմն ինչպէս յանցանք գտնելու էր անոր վրայ, ինչ չարախօսութիւն հնարելու էր զանի ի կորուստ մասնելու համար:

Իբրեւ ի դուր կը շարժվէր իր շարահանդէսը, բան մը չէր գտնէր, ու օրերը կ'անցնէին: Բրէսիլին հիտ ծամ մը առանձին գտնուելու համար հնարած բոլոր գծուած մեքենայութիւնները ի դերն կ'ընէին: Միւրաթի անկերն չիմամութեան հանգիստ: Պարտաւորեցաւ համոզուելու որ ան

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (34)

ԺՐՀԱՆ ՏՒՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՁՈՒՄՈՒ ՎԷՊ

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ժերմէն իրեն գէմ կանգնիլը տեսաւ բուլը այն կիներուն ատելութիւնը՝ որոնց տարփածութիւնը կամ պարզապէս զմայլողները իր աննման արժանիքը կը գովէին: Ձինքը հեռացնելու, գուշակուած նախանձորութեան խոյս տալու համար, կոշտութեամբ չիարուեցան իրեն հետ: Միաբանեցան և զինքը հիւր ընդունելու ժամանակ, նոյն կատուական բազրաբարո-

Գ. Է. ՍԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՈՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՅՕՆՕԿՐԱՅՆԵՐՈՒ

սովորութիւնը այնպէս կը պահանջէ, որ պէս զի Գերմանիոյ մայրաքաղաքին բարձր դասակարգը անոր ներկայացայ: Վերջապէս ազգայնականներու միջև տըրուած պարզ այցելութիւն մը պիտի ըլլայ: «Բէռլինէ Զայնիմը» ալ ծանոյց թէ երկու երկիրներուն զեպանները ժամանակի մը համար արձակուրդով պիտի մեկնին, զիւսանադատական յարաբերութիւնները առկա լինակի մէջ թողնուի: «Թայմ» ալ լուրը արտատպեց առանց հերքելու և ընդհակառակ ըսաւ: «Պէտք չէ զարմանալ թէ Անգլիոյ կառավարութիւնը ինքզինքը պարտաւոր կը զգայ միջոցներ ձեռք առնել՝ լաւ հասկնալու համար Գերմանիոյ թէ ֆոն Պիլլով կոմսին յայտարարութիւնները ո՞րքան դառն ապաւորութիւն մը գործած են Անգլիոյ մէջ»: Այդ վիճակը, վերջապէս, բաւական ծանրակշիռ է և ուշագրաւ: Պերլինի ու Լոնտոնի մէջ ժամանակ մը ի վեր տիրող ատելութիւնը պայթելու վրայ է. անշուշտ այդ հրդեհը ծանր փառանք առաջ պիտի բերէ երկու երկիրներուն յարաբերութեանց մէջ:

ՊԱՂՏՈՏԻ երկաթուղիի մասին Պերլինի «Նեյսթիմէ Նախընթաց» լրագիրը գիտելու համար թէ Անտառի երկաթուղիներու ընկերութեան կողմանէ ստացուած արտօնութիւնը Ռուսիոյ համար քաղաքական անշուշտութիւն մը կը նկատուի: Պերլինեան թերթը կ'ըսէ նաև թէ յիշեալ գծին շինութիւնը, գերմանական ազդեցութիւնը զօրաւոր հիմքերու վրայ հաստատելու կոչուած է այնպիսի երկրի մը մէջ զոր Ռուսիա ուշ կամ կանախ՝ իր ազդեցութեան շրջանին տակ ի նայալու սահմանուած կը նկատուի:

«Նեյսթիմէ Նախընթաց» կը յիշէ այս առթիւ վերջերս Արևելեան Աֆրիկէի գերմանական ընկերութեան ձեռած հիմնուած «Օսթաֆրիկ» հանգիստի մէջ Զօրավար Ֆրանսիոյ վաշայի կողմանէ յոգուած մը: Զօրավարը կարծիք կը յայտնէր որ ծրագրուած գիծը օսմանեան կայսրութեան համար ռազմագիտական, քաղաքական և տնտեսական ամենամեծ կարևորութիւն ունի: Այդ երկաթուղին, կը յայտնուի, նախ պիտի ծառայէ հեռաւոր գաւառները կեդրոնական իշխանութեան հետ ուղղակի և արագ յարաբերութեան մէջ դնելու: Ենայ, պատերազմի ժամանակ թող պիտի տայ հարաւ-արևելեան նահանգներու զօրքերը Պաղատա համախմբել, միջպետ հիմա առանց կրնան միայն անկական զօրագուններու ծառայութեան համար գործածուիլ: Վերջապէս

ոչ միայն իր ներկայութիւնը չէր փնտռեր, այլ նոյն իսկ ձեռքէն եկածը կ'ընէր իրեն հետ մէկտեղ չզանուելու համար:

Այս ժամանակի միջոցին, Սալամաթին, յաղթական Սալամաթին անձնատուր կ'ըլլար այն խօլ ցնծութեան զոր իր մօտաւոր ամուսնութեան յոյսը կը պատճառէր իրեն: Ինչէր քաշեր էր մինչև որ Իքսալը հաւանեցուցեր էր. վասնզի, ամեն խորին և համոզուած սիրոյ յարակից եղող ապուշ միամտութեամբ, խեղճ միմտը հաւաստի էր որ իր բարեբախտութիւնը միմիայն իր արժանիքին կը պարտէր, և երդում անգամ պիտի ընէր որ իր անձնութեան եռանդէն զգաժուելով միայն ըմբօստ գերուհին կը հաւանէր զինքը իրեն ամուսին ընդունիլ...

Ինչպէս երջանիկ պիտի ըլլային...

Թէ որ Պոլսէն Պաղատա երթալիք գիծը մինչև Պարսկաստան յոյսը երկարի, ատիկայ Սրեկընի ու Սրեկընի միջև հաղորդակցութեան ամենակարևոր ճամբաներէն մին պիտի ըլլայ:

Տ Ե Ղ Ա Վ Ա Ն

Ն. Բ. Խաթիւնի կողմէ շարաք գիշեր տրուած պարահանդէսը ըստ սովորականին շատ շքեղ և շատ փայլուն եղաւ:

Ապախին պալատին բողոքական և ընդհանրական սրահները շատ նեղ կաշային պարուստակներ համար երկու հազարի մօտ հրաւիրեալները որոնց մէջ կը նշմարուէին Պօլիս և Սիրիւ մեծ դուքսերը, Օլտէնպուրիի դուքսը, այս պահուստի բոլոր զօրաշնչիկ Գա. հիւրէ գահուող ակնաւոր անձնաւորութիւններ, տեղացի իշխանները, նախարարները, պաշտօնակարներու մարմինը, գրաւի բանակին սպաները, կառավարութեան բարձրաստիճանի պաշտօնատարները և վերջապէս ամեն անոնք որոնք անուն մը ունին Գա. հիւրէի մէջ:

Հայ գաղութէն ներկայ կը գտնուէին Ն. Վ. Պօլոս փաշա Նուպար և Տիկին Պօլոս փաշա, Օրբուրդ Նուպար, Ն. Վ. Տիգրան փաշա, Արթիւր պէյ և Տիկին Ա. Ստեփան, Երուսաղէմ պէյ Աղաթօն, Գրիգոր Էֆ. Եղիայեան, Տեառք Մ. Անանեանց և Յովհաննէս Նախնուի: Ն. Բ. Խաթիւր ժամը 11¹/₂ին պարերու սկզբնաւորութեան նշանը տուաւ իր թէն ունենալով տը Գրօմէր Կոմսուհին:

Ժամը մէկին ատենները պիտի գտնուէր բացուեցան հրաւիրեցող առջև որոնք պարդապէս յարձակեցան Նոսիւնիլի պատրաստած ճոխ սեղաններուն վրայ:

Պարահանդէսը տեղի միջև առատեան ժամը երեք:

—Կիրակի օր կէս օրէն վերջը Խաթիւր, մասնաւոր կառավարող Մոնթաղազ գնաց:

—Այս իրիկուն Ապախին պալատին մէջ պետական հացիկերով մը պիտի տրուի Նորին Բարձրութեան կողմէ ի պատիւ Պ. Թոմէնիի, ասոր վերջնականապէս մեկման առթիւ և վաղը գիշեր, ուրիշ հացիկերով մը պիտի արուի ի պատիւ Պորիս և Սիրիւ մեծ դուքսերուն:

—Երէկ, Վիլհէլմ կայսեր ծննդեան 43րդ տարեկարձին առթիւ Պ. Վօն Միլլէր մեծ ընդունելութիւն մը կատարեց գերմանական գործակալութեան մէջ և երկուրէն գերման գաղթականութիւնը՝ օրուան տօնին առթիւ, մեծ ճաշ մը տուաւ Օթէլ Տիւ Նիլի մէջ:

Ինչպիսի աղօթիկ կեանք մը պիտի յարգարէր անոր, այդ շքեղ արարածին որ կը զիջանէր հաւանիլ իր ծագելիք անձը ամուսին ընդունելու...

Հանրաժողով, իրեն առատաձեռն տիրուհի, փառաւոր օժիտ մը կը սահմանէր իր պալատին: Նախ Սախա Զէնապ թաղին մէջ աղօթողուն մը (իրաւ է որ տունը քիչ մը խոնաւ էր): Ու ճիշտ ատոր համար էր որ, վարձակալ չլինալով գտնել, Զօհրայիս գործին կուգար զայն ձեռքէ հանել յօգուտ իր գերուհին, որուն փառաւոր ընծայ մը ընկու պէս կ'ըլլար. տեղին թերութիւններուն աչքը զոցել տալու յարմար բան մը որ կար, կարաւորներուն ճոխութիւնն էր. տունը մանաւարալէն սկսեալ մինչև պատշաճութիւնը կահաւորեալ էր, սենակաները գրեթէ պերճաւոր, գորգերը փաղկուն գոյ-

—Երէկ կէս օրէն վերջը անոր ունեցաւ, նախկին նախարարներէն Սաթիւ փաշայի յուղարկուածութիւնը:

Հանգիցեալը հին եգիպտացի, խիստ յարգուած զմէք մըն էր ուղղամտութեանը և բարձր նկարագրին համար:

—Ն. Բ. Խաթիւր սահմանի աստիճանը շնորհիւ քաղաքին ծանօթ բիշէներէն Տօր. Բարիսի:

—Ստիկանութիւնը մեծ խնամօք առաջ կը տանի Պ. Պիտիլիի անհետացած և ապա գտնուած որդւոյն գործին առթիւ բացուած քննութիւնը:

Կերէի թէ այդ անհետացածն պատճառները այնքան զայնակեցուցիչ չեն որքան կը դուրսուէին բերել բերան:

Հիմայ այնպէս կը կարծուի թէ այդ պատանին ինքն իր գլխուն կատարած է պտույտ մը զէպի Բարբերը և ճամբան կորուսած ըլլալուն, երկու երեք օր լափառած է ասպիւս անպին:

Ամբաստանութեան տակ գտնուող յոյն կահագործը այս գործին մէջ որևէ մեղսակցութիւն չունենալը հաստատուած ըլլալով, ազատ արձակուեցաւ: Գննութիւնը կը շարունակուի:

—Սիրիկէի կարի մեքենաները առաջին կարգի մեքենանք մը շահեցան վերջին երկրագործական ցուցահանդէսի մեքենաներու բաժնին մէջ:

—Երէկ գիշեր, Օրբուրդի թատրոնին մէջ սկսաւ Ֆրանսական բաժնիներու շարքը: Ներկայացուած թատերախաղն էր «Չաղա», գործը Բիւն Պերթոն և Դաու Սիմօնի:

Այս գիշեր, Պիտիլի մէկ սքանչելի կատակերգութիւնը «Ժալուդ»:

—Կ. Պոլսոյ մէջ խիստ ծանօթ ջութակահար Պ. Պոստէն յառաջիկայ հինգշաբթի գիշեր մեծ նուագահանդէս մը պիտի տայ Օթէլ Գոնիմանթի սրահներուն մէջ:

ԿԱՐԵԻՆՈՐ ԱԶԳԻ
Բաժանորդագրութեանց և ծանուցմանց համար գիւմէլ թերթին մատուցարարին առ:

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԱՆԵԱՆ
Թղթատարական Տուր թիւ 732

ԳԱՀԻՐԷ

Pour les abonnements et les annonces s'adresser à l'Administrateur du journal:

M. SARKIS MIRANIAN
Boîte postale N° 732
Le Caire

ներով, մահճակալները և անօթները՝ շարժական պղինձէ:

Իքսալ անձնական սպասարկութեանը համար կ'ընդունէր նաև սեամօթ գերուհի մը, կառք մը ձիով հանդերձ, տասներկու արծաթ զրդալ, հինգ մետաքսեայ զգեստ, տասներկու բամպակ սաւան և աղաման, գալու մանեակ մը: Վերջապէս, բրէնսը Սալամաթինի երկու հարիւր ոսկիի գումար մը կուտար՝ տանը առաջին ծախքերուն համար:

Ուրախութեան Սալամաթին խելքը գլխին կ'երթար. աչքաքի հարստութիւններ իրեն համար... իրեն որ իր աճեալ անգամները հանգստեցնելու համար ժամանակ եղած էր որ անկողին մ'ալ չէր ունեցած, անօթութիւնը անցնելու համար կառք մը հացի անգամ կարաւոր քաշած էր... Հիւ-

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԻԺՈՐՈՒՄ, 24 Յուն. — 150 Պօլսեր իր նախորդ խորութիւն մէջ տեղացի գործարարներուն պահանջութիւն ընող քաղաքագործներէն 25 հոգիի ընդհանուր յանկարծակիի բերին: Թաւառ դիմագրութեան մը վերջը այս վերջինները ստիկանեցան անձնատուր ըլլալ: Մէկ հոգի սպանուեցաւ և 7 հոգի վիրաւորուեցան: Պօլսերը 6 ըսպանուած և 4 վիրաւորեալ ունեցան: Պերլինի զին տարօրէն զին վերջինները գրեթէ լըմեցած է: Գլխաւորներէն 2 երկուսը շինուած գիծը հաւանականաբար մինչև Մէքլինի պիտի երկարի:

ԲԵՐԼԻՆ, 24 Յուն. — Սըր Լ. Սալով իր յանձնարարութեամբ մատուցած միջոցին ըսաւ թէ, Չինու զարգացման նպատակ ունեցող կարելի չէր բայց եթէ առեւտրական ազատ փոխանակութեան զմէք ուսած արգելքներուն ջնջուելովը. Չինուպէս յանձնարարեց կայսեր ամբողջովին բառնալ այն խոչընդոտները որք աշխարհին միւս մասերուն հետ առեւտրական ազատ հաղորդակցութիւնները խափանելու հանգամանք ունին:

ԼՈՆԴՈՆ, 24 Յուն. — (Երեսփոխանական ժողով). Լորտ Գրանպոն յայտարարեց որ եթէ մասնաւոր պարագաներ մէջ տեղ չեղնէ, հարաւ աֆրիկեան երկու հանրապետութիւններուն միացումը օտար առեւտրութիւններուն չը պիտի ծանուցուի:

Լորտ Ջ. Համիլթըն կ'ըսէ թէ, Հոպկոկ Ուլաշ Խան, Հոպկոկոստանի փոխարքայն, վստահեցուցեր է որ իր հօր հետքերուն պիտի հետեւի և իր բարեկեցիկներուն բարեկեցիկ պիտի մնայ: Միւս կողմանէ կառավարութիւնը իմացուց Հոպկոկ Ուլաշի որ իրեն բարեկեցիկ պիտի ըլլայ և պիտի պահպանէ, և աւելի պիտի զօրացնէ երկու երկիրներուն բարեկեցական յարաբերութիւնները:

Կալէօի իշխանը Պերլին մեկնեցաւ:
Ս. ԲԵՐԼԻՆՈՐ ՊՈՒՐԿ, 24 Յուն. — Ռուս մամուլը հաստատ կերպիւ կը ծանուցանէ որ արտաքին կարգի Աֆգան պատերազմութիւն մը ի մօտոյ հոն պիտի հանդիսանայ: **ՎԱՇԻՆԿՏՈՆ, 24 Յուն.** — Տանիմար-բայի վերաբերող Անթիպիս կղզիներուն Միացեալ Նահանգներուն վաճառման գոյնադիրը հոս ստորագրուեցաւ:

ԱՌԷՆԲ, 24 Յուն. — Զրոյց պատեցաւ թէ Երկրի թագաւորին զմէք արագութեամբ մը տեղի ունեցած էր: Այդ լուրը հերքուեցաւ:

ԲԱՐԻՉ, 24 Յուն. — Ընդհանուր ընտրութիւններու թուականը պիտի փոխադրուի: Հաւանականաբար Ապրիլ 13ին տեղի պիտի ունենան:

մայ աւեր պիտի ըլլար բոլոր այդ բաներուն, ուղարկելու պէս պիտի տրամադրէր ստացուածքին ալ կ'ունէր ալ: Ինչ անակնկալ բանտ... Ա՛հ, ոչ, անոնք ըսածսուն չափ անպիտան բան չէր. պէտք էր միայն համբերել ու սպասել գիտնալ: Հազիւ կը յիշէր այդ ամբարտաւան կնոջ առաջին ընդմիջումը, և ըսել յանգիստ խօսքերը. բանի որ կը հաւանէր այս ամուսնութեան, ուրեմն ինքն ալ այլևս չէր մտածեր անոր գեղ զինքը, ու կը հասկնար որ պալատին մէջ կատարած գերը ալ վերջացած էր:

Մեծ հանքմին պէս, Սալամաթին ալ համոզուած էր որ արտօրը և առանձնութիւնը յաղթած էին այդ երկաթի գլխուն. անգամ մը որ իշխանութեան երազները յաւիտեան ջնջուած էին, այլևս այնօր բաւրեալ տը ազատութիւնը վերստին ձեռք բերելուն, և երախտագիտութեամբ կ'ընդունէր փրկութեան միակ միջոցը որ իրեն կը տրուէր:

(Շարունակելի) Թարգմ. Թ. ՍԵՐԵԱՆ

Ի. Տ Ե Մ Ի Ր Ժ Ե Ա Ն

ԱՅ Ա Մ Ն Ա Ք Ո Յ Ժ
ԳԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻԻ 3 ՕԹԷԼ ԵԼՓԸՐՏՈՒ ԴԵՄԱՑ

Ելեքարական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ տկուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն ընկանին յար և նման կեղծ ակուսներու, քանթիկներու ոսկիէ, ալյումինիումէ, ֆաուլուէ: Ապահով և տուր թոշնապած ոսկի, բլաթին, կալին, կալին: Լինեալով հիւանդութեանց դարսանում ելեքարական և ուրիշ միջոցներով:

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԴ

Ապահովագրական ամեն կարելի դուրսբերել կը գործարքէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւ այլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագինը և ապահովագրութեան գանաղան դրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՋԻՍ և Ժ. ՎԱԼԺԻՇ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար: Գ. ԵՆԱԻՈՅ ԴԵՐ-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԴ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՑԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ժգլնթացիկ հաշիւներ կը բանայ արքաւոր աւանդներու վրայ:

Յրանայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր:

Աւանդ և դուռն գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուտքաներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՅՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻԾ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը

4ին (յ. մ.) դէպի Բիւրճա, Իզմիր, Մի-

տիլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստ,

ներքէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շա-

բաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժա-

մանակ կ'ունենան շոգենաւները Բի-

րճա հանդիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին

(յ. մ.) դէպի Բօս-Սալիտ, Եաֆա,

Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէր-

սին և Իսկէնաէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միենոյն նաւահանգիստ,

ներքէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնընչից օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Շրջու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանք համար դիմել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօս-Սալիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուրի ամեն մասնահիւղերուն:

1--1902

ՅԱՆՋՆԱԿԱՏԱՐ-ԴՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՋՆԿԱՑԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջակայներէն կ'ընդունուին Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուրկի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական Քրէտի Ֆօն-սիէի, Բոմբէյի երկաթուղոյ բրոմէաներու, և դարձեալ ամառվճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապահովագրութիւնը ըստ իր կանխիկ փասթի միջոցաւ Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը դրկել և քսանցեալը «գոնթո ռամպուրման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 Վրշ. արժէթղթով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Ֆ. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի կային ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանին:

Հասցէ՝

Garabed Erzenzatsian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց հասար:

Չափի վրայ գգեսներ, յուսադոյն պայմաններով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՅՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆՐԸՐԷՕՐ ՆԻԲՕԼԱ. արդթ. Թօն. 5500	2ԻԽԱՉՅ տարողութիւն Թօն 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	2ՍՐ " " 5500

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպի Ի Օտէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶՐԻՄ ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՅՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւերուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ՇՈՎՈՒ ՍՍԻԱԿԱՆ ԵԶԵՐՔԵՆԲԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ՇՈՎ:

ՇԱՐԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵՄՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐ-ՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՅՈԼԻՍ:

ԳԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Աղեքսանդրիա, Իզմիր և Կ. Պոլիս:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղի վաճառ հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաձեւեր.

Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը դնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՊՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, սնդուութիւն և փոխում առաջ կը ընդէ, ինչ որ հիմնադէս բուժելու համար պետք է ա են ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ «Էրիչ ալքոլային Գեղբուր» նման չի խանգարեր ստամբուր:

Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ:

46—316